ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6
ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ. Մարկոսյանի մոտ կայացած խորհրդակցության

07.07.2020թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝
ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, Զբաղվածության տարածքային կենտրոնների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքներում իրականացվող ծրագրերի մշտադիտարկումների արդյունքների մասին.
   ա/ Գուգարքի տարածաշրջանում /Դարպաս և Զորագետ համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Վանաձորի ԶՏԿ տնօրեն Արա Առաքելյան, խորհրդատու Վալերի Ջաղինյան/
   բ/ Սպիտակի տարածաշրջանում /Ծաղկաբեր, Սարալանջ համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Սպիտակի ԶՏԿ տնօրեն Գագիկ Ստեփանյան, խորհրդատու Գայանե Բոջուկյան/
   գ/ Թումանյանի տարածաշրջանում /Ախթալա, Չկալով համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Ալավերդու ԶՏԿ տնօրեն Նունե Անտաշյան, խորհրդատու Իրինա Գրիգորյան/
   դ/ Ստեփանավանի տարածաշրջանում /Լոռի Բերդ, Գյուլագարակ համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Ստեփանավանի ԶՏԿ տնօրեն Մկրտիչ Գրիգորյան, խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան/
   ե/ Տաշիրի տարածաշրջանում /Տաշիր, Մեծավան համայնքներ/ իրականացվող ծրագրերի մասին /Տաշիրի ԶՏԿ տնօրեն Ալիսա Ալեքսանյան, խորհրդատու Վաղարշակ Եղիազարյան/
2. Կազմակերպչական աշխատանքների պատճառով թվով 3 ծրագրային աշխատանքների սկիզբը 19.06.2020թ.-ից՝ 22.06.2020թ. փոխադրելու հարցի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզի Տաշիր և Մեծավան համայնքների ղեկավարների կողմից գրությունների քննարկման մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

3. ՀՀ Լոռու մարզի Տաշիր և Մեծավան համայնքներում 19.06.2020թ.-ից սկսված /ծրագրային/ և 03.07.2020թ. ավարտված թվով 3 ծրագրերի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահ Գայանե Մարկոսյան/

4. ՀՀ Լոռու մարզի Զորագետ և Դարպաս համայնքներում 01.04.2020թ.-ից սկսված և 30.06.2020թ. ավարտված ծրագրերի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/

5. ՀՀ Լոռու մարզի Սարալանջ համայնքում 04.05.2020թ.-ից սկսված և 30.06.2020թ. ավարտված ծրագրի մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնելու համար 2020թ. երկրորդ կիսամյակում ՀՀ Լոռու մարզում լրացուցիչ ծրագրերի առաջարկների քննարկում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

7. Այլ հարցեր:

Ո ր ո շ ե ց՝

1. Համաձայնություն տալ ներքոշարադրյալ ծրագրերի կատարման ժամկետների փոփոխությանը՝ աշխատանքների սկիզբը 19.06.2020թ.-ից՝ 22.06.2020թ.-ին, իսկ ավարտը համապատասխան կերպով փոխադրելուն.

ա/ Մեծավանի համայնքապետարան. «Մեծավան համայնքի Միխայլովկա գյուղի 43.4 հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում»

բ/ Տաշիրի համայնքապետարան. «Տաշիր համայնքի 45 հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում»

գ/ Տաշիրի համայնքապետարան. «Տաշիր համայնքի 53.4 հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում»:

2. Ա ր ձ ա ն ա գ ր ե լ՝

ա/ ՀՀ Լոռու մարզի Դարպաս համայնքի կողմից 01.04.2020թ.-ից մինչև 30.06.2020թ. իրականացված «Դարպաս համայնքի գերեզմանատան ցանկապատում, տարածքի բարեկարգում» ծրագրի ավարտը:

բ/ ՀՀ Լոռու մարզի Ձորագետ համայնքի կողմից 01.04.2020թ.-ից մինչև 30.06.2020թ. իրականացված «Ձորագետ համայնքի խաղահրապարակի վերանորոգման, բարեկարգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ավարտը:

գ/ ՀՀ Լոռու մարզի Սարալանջ համայնքի կողմից 04.05.2020թ.-ից մինչև 30.06.2020թ. իրականացված «Սարալանջի խաղահրապարակի կառուցում և ցանկապատում» ծրագրի ավարտը:

դ/ ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի կողմից 22.06.2020թ.-ից մինչև 01.07.2020թ. իրականացված «Մեծավան համայնքի Միխայլովկա գյուղի 43.4հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում» ծրագրի ավարտը:

ե/ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի կողմից 22.06.2020թ.-ից մինչև 02.07.2020թ. իրականացված «Տաշիր համայնքի 45հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում» ծրագրի ավարտը:

զ/ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի կողմից 22.06.2020թ.-ից մինչև 01.07.2020թ. իրականացված «Տաշիր համայնքի 53.4հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում» ծրագրի ավարտը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ՝ ավարտված ծրագրերի վերաբերյալ:

բ/ Նախապատրաստել գրություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ 2020թ. երկրորդ կիսամյակում ՀՀ Լոռու մարզին լրացուցիչ ծրագրերի չափաքանակ տրամադրելու խնդրանքով:

2. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Աննա Գասպարյանին՝

Ապահովել իրականացվող ծրագրերի մասին հանրային իրազեկումը՝ աշխատանքներին ներգրավելով մասնակից կողմերին /գործընթացի կազմակերպիչներ, շահառուներ/:

/Տարվա ընթացքում/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ, ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/